

ՏԻՐՈՒՆԻ

ՀԱՆԳԻՍՏ ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Ապրիլ 23ին Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը իմացաւ մահուան տխուր լուրը հանրածանօթ եւ ազնուական հայ տիկնոջ եւ ընտանեւէր մօր, Տիկին Մարի Մանուկեանի, որ նախորդ օրը վախճանած էր Տիթրոյթի մէջ: Ապրիլ 24ի երեկոյին, ժառանգաւորաց Վարժարանի Ալեք եւ Մարի Մանուկեան սրահին մէջ, Եղեռնի նահատակներու յիշատակին կազմակերպուած յայտագրի վերջաւորութեան, Պատրիարք Սրբազան Հայրը ծանոյց ներկաներուն տխուր լուրը եւ "Հոգւոց" աղօթքով հանգիստ մաղթեց ննջեցեալի հոգիին:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, իր կողմէ յանուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Երուսաղիմահայ ժողովրդեան, բոլորին խորին ցաւակցութիւնները փոխանցեց հանգուցեալ Տիկին Մարի Մանուկեանի ազնուազարմ կողակցին, մեծայարգ Տիար Ալեք Մանուկեանին եւ զաւակներուն եւ ընտանիքի անդամներուն:

Տիկին Մարի Մանուկեան ծնած է 1902ին Իզմիրի մէջ: Ան դուստրն էր Տէր եւ Տիկին Պ. Թաթեաններու: Թաթեան ընտանիքը 1910ին փոխադրուած է Ամերիկա եւ հաստատուած է Նիւ Եորք քաղաքին մէջ, ուր պարմանուի Մարի ստացած է իր ուսումը: Ան փոքր տարիքէն ցուցաբերած է գեղարուեստական յատուկ ձիրքեր: Ան իր եղբօր՝ Առաքելի, որ շնորհալի երգահան ջութակահար մըն էր, եւ Արմենակի, ինչպէս բողջը՝ Արշոյին, գործօն կերպով մասնակցած է Նիւ Եորքի հայ համայնքի գեղարուեստական կեանքին: Ան քազմաթիւ դերեր վերցուցած է հայկական թատերախաղերու մէջ եւ դաշնամուրային ելոյթներ ունեցած է քնմերու վրայ:

Ան 1931ին ամուսնացած է Տիթրոյթի

անուանի նարտարարուեստական, Մաւֆօ ընկերութեան հիմնադիր եւ քարերար Ալեք Մանուկեանի հետ եւ ունեցած են երկու զաւակներ՝ Լուիզ եւ Ռիչըրտ:

Երկար տարիներ ապրելէ ետք Տիթրոյթի մէջ, Մանուկեանները իրենց բնակարանը նուիրած են Տիթրոյթի քաղաքապետութեան, որ ներկայիս զայն կը գործածէ իբրեւ քաղաքապետի պաշտօնական բնակարան:

Մարի Մանուկեան գործունեայ էր հայ գաղութի մշակութային եւ քարեսիրական կեանքին մէջ: Անոր քազմաբեղուն ազգային ծառայութեանց մէջ, յատկանշական է մանաւանդ հայկական խոհանոցի առաջին անգլերէն գիրքը, գործին կազմած է եւ վաճառած է ի նպաստ Բարեգործականի, պատկառելի գումարներ ապահովելով Միութեան: Ան վարած է նաեւ քազմաթիւ այլ պաշտօններ, ինչպէս Հ.Բ.Ը.Միութեան Տիթրոյթի մասնահիւղի ատենապետութիւնը ինչպէս նաեւ անդամակցութիւնը Լիվոնիա քաղաքի հայ տարեցներու տան: Ան մասնաւորաբար գործօն էր Բարեգործականի մէջ, որուն նախագահութիւնը 37 տարիներ ամբողջ վարեց իր ամուսինը՝ Տիար Ալեք Մանուկեան: Իսկ վերջին չորս տարիներուն Միութեան նախագահութիւնը ստանձնած է իրենց դուստրը՝ Տիկ. Լուիզ Մանուկեան Սիմոն:

Տիկին Մանուկեան կը սիրէր ճամբորդել: Ան իր ամուսնոյն ընկերացած է դէպի աշխարհի տարբեր երկիրները՝ ազգային առաքելութեամբ եւ յաճախ մասնակցելու Մանուկեաններու անունով կառուցուած դպրոցներու եւ թանգարաններու բացման հանդիսութեանց: Այսօր Մարի Մանուկեանի անունով կը գործեն երկու վարժարաններ՝ Լոս Անճելըսի եւ Պուեռտո Այրէսի մէջ, Արժանքին: Ան

սակաւաթիւ սփիւռֆահայերէն մէկն էր որ 1955ին Սուրբ Էջմիածնի մէջ մասնակցեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. Հայրապետի օծման արարողութեան, առաջին անգամ ուխտի երթալով հայրենիք:

Մանուկեան ամուլը իշխանական նուիրտութիւններ կատարած են Միշիկընի համալսարանին, Տիթոյթի Ուէյն Նահանգային Համալսարանին, Հարվըր հիւանդանոցին եւ քաղմաթիւ ալ վարժարաններու, հիւանդանոցներու, եկեղեցիներու եւ մշակութային հաստատութեանց: Տիկին Մանուկեան յամառ ընթերցող մըն էր. մինչեւ իր յառաջացեալ տարիքը հաւատարիմ հետեւող մըն էր հայ մամուլին. միշտ արթուն միտքով կը հետեւէր հայ թէ օտար գիրքերու հրատարակութեան եւ յափշտակութեամբ կը կարդար անոնցմէ շաղերը:

Հանգուցեալը իր ետին կը թողու իր ամուսինը՝ Ալեք Մանուկեան, դուստրը՝ Լուիզ Մանուկեան Սիմոն, զաւակը Ռիչըրտ Մանուկեան, ինչպէս նաեւ վեց թոռներ եւ երկու թոռնորդիներ:

Թաղման կարգը կատարուեցաւ Սաուքֆիլտ, Միշիկընի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի Առաջնորդ Գեր. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի, եւ մասնակցութեամբ Արեւմտեան Թեմի եւ Գանատայի Թեմի Սրբազան Առաջնորդներուն, Գեր. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի եւ Գեր. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, եւ մեծ թիւով հոգեւորական հայրերու եւ սգակիրներու, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի, Եւրոպայի եւ Միջին Արեւելի երկիրներէն:

Առաջնորդ Խաժակ Սրբազան իր դամբանական խօսքին մէջ, անդրադարձաւ ննջեցեալին արժանիքներուն, իբրեւ համակրելի եւ համեստ հայ մայր մը, քարեսիրտ եւ ազնիւ հոգի մը, որ համախոհ կողակիցը մնաց միշտ իր քարեգործ ամուսինին, թէ ազգային բեղուն գործունէութեանց եւ թէ առեւտրական ասպարէզի իրագործումներուն մէջ:

Հանգիստ Տիկին Մարի Մանուկեանի հոգւոյն եւ Ս. Հոգւոյ միխթարութիւն Տիար Ալեք Մանուկեան քարերարին եւ իր հարազատներուն: